ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

ԹՈՔԱԽՏ ԵՒ ԼՈՅՍ

Թոքախտը ամենաքայքայիչ հիւանդութիւններից մէկն է, վերջին ժամանակներս, արևմուտքի առաջնակարգ բժիշկները յամառ կերպով հետազօտում էին լոյսի զօրեղ կազդուրիչ յատկութիւնը։ Ներկայումս, ինչպէս հաղորդում է Вит. губ. Вѣд. նոյն հարցին վերաբերեալ մի շարք ուշադրութեան արժանի ապացոյցներ են եղած, որոնք յայտարարուած են մօտ օրերս և հիմնուում են վերջին 11 տարուայ ընթացքում Փարիզում և Ֆրանսիայի այլ քաղաքներում կատարած փորձերի վրայ։ Բոլոր յայտնի բժիշկները, ինչպէս Бруардель, Гранше, Ландузи, Летюйе, Репонъ, Страусъ, Фійанссье, Гро, Жюйеръ և այլն, վճռական կերպով յայտարարում են, որ Թոքախտը իր բոլոր տեսակներով, բուն է դնում և զարգանում այն տեղերում, որտեղ բնակարանները բաւարար լուսաւոր չեն։ Լոյսը, յիշել բժիշկների ասելով, տուբերկուլեօզի մանրէի ամենաուժեղ թշնամին է. ուրեմն կարող է թոքախտի դէմ ամենազօրեղ զէնքը լինել։

Ահա այդ ապացոյցները. Փարիզի 80 հազար տներից 5243-ը տուբերկուլեօզի բուն են, այդ վարակիչ հիւանդութեան իսկական բնակավայրը։ Այդ բնակարաններում 1894 թուի Յունուարի 1-ից մինչև 1905 թուի Յունուարի 1-ը ամեն տարի 100 մահուան դէպքում 38 տոկոսը տուբերկուլեօզով էր։ Երևաց որ բոլոր այդ 5243 տները պատկանում են Փարիզի այն տներին, որոնք բոլորից աւելի զուրկ են լուսից և որոնց մէջ միշտ կիսախաւար է տիրում։ Ընդհակառակը լուսաւոր տներից և ոչ մէկը տուբերկուլեօզի կողմից ոչ մի վտանգ չէ ներկայացնում. այդ տեսակ բնակարաններում թոքախտից մեռնողների տոկոսը ամենապակաս է եղել։ Այս դէպքում թուա-

նշանների ցուցումները այնքան համոզիչ և պերճախօս ապացոյցներ են, որ յօդուածագիրը իր վերոյիշեալ աշխատութեան վերջաբանում ասում է. «Թոքախտն ամենից առաջ խաւարի հիւանդութիւն է»։ Ուշադրութեան արժանի է և այն, որ թոքախտի դէմ կռուում, լոյսի օգտաւէտ դերը բաւականանում է ոչ միայն նրանով, որ լոյսը քայքայիչ կերպով է ազդում տուբերկուլեօզի մանրէի վրայ, այլ և մարդու կազմուածքի ամենաառողջ գրգռիչ կենսական ոյժերին է պատկանում։ Լոյսի ազդեցութեամբ ուժեղանում է մեր կազմուածքի ամբողջ նիւթերի փոխանակութիւնը. իսկ թոքախտի դէմ կռուում այդ կարևոր է։ Արդէն յայտնի է թէ ինչ օգուտ է բերում այդ տեսակ կռուում զօրեղացած սննդառութիւնը։ Զօրեղացած սննդառութիւնը այն ժամանակ է օգտաւէտ, երբ աւելանում է նիւթերի փոխառութիւնը, իսկ այդ լինում է լոյսի ոյժի ազդեցութեան ժամանակ, որը գրգռում է մեր կազմուածքի կենսական ոյժը։ Այստեղից առաջ է գալիս հետևեալ ենթադրութիւնը. որտեղ չի կարելի օգտուել առաւօտեան ցերեկուայ լոյսից, հարկաւոր է, տուբերկուլեօզի դէմ կռուելու համար արհեստական լուսաւորութեան դիմել։ Վերջին դէպքում պէտք է գերադասել ելեքտրական լոյսը, որի ժամանակ բնակարանների առատ լուսաւորութիւնը չէ փչացնում օդը, որ ամենակործանիչ կերպով ազդում է նիւթերի փոխանակութեանց և կազմուածքի սննդառութեան վրայ ու միաժամանակ լոյսի կազդուրիչ ազդեցութիւնը ոչնչացնում է։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ